



Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Արարատի մարզի Այգավանի Գ. Ղուկասյանի անվան միջն. դպրոց» ՊՈԱԿ

Առարկա՝ Ֆիզիկա

Թեմա՝ Պրոբլեմային ուսուցման գաղափարական հիմքերը և մեթոդիկական ֆիզիկա առարկայի դասավանդման ժամանակ

Վերապատրաստող, մենթոր՝

Կարինե Ավետիսյան

Ուսուցիչ՝

Հարությունյան Հայկանուշ Լենիկի

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԷՅՈՒՆ

1. Ներածություն-----	3
2. Պրոբլեմային ուսուցման գաղափարական հիմքերը և մեթոդիկան-----	5
4. Եզրակացություն-----	11
5. Օգտագործված գրականություն-----	12

Ներածություն

Կրթական համակարգի բարեփոխումներն օրեցօր ավելի խորքային ու անշրջելի են դառնում: Հետևողականորեն, քայլ առ քայլ փոխվում է կրթության ընդհանուր ռազմավարությունը, կրթական չափորոշիչներն ու պահանջները, ուսուցման կազմակերպման ձևերն ու մեթոդները, գնահատման համակարգը, դասագրքերը:

Նոր պայմաններում ուսուցիչն այլևս սահմանափակված չէ նեղ, պրակտիկ դիմումների շրջանակով, ինքնադրսևորման և ստեղծագործ գործունեության համար լայն ասպարեզ է բացված:

Բարեփոխումները միտված են մի ընդհանուր նպատակի. ուսուցման պրոցեսը կազմակերպել այնպես, որ յուրաքանչյուր սովորող դառնա դասապրոցեսի ակտիվ մասնակից և ուսումնական գործունեություն իրականացնելու առավելագույն ազատություն ու ինքնուրույնություն ստանա: Նոր մոտեցումները կարևորում են աշակերտների միմյանց հետ ակտիվ փոխազդեցությունը նրանց խմբային աշխատանքն ու համագործակցությունը:

Աշակերտը դպրոցում պետք է իրեն զգա լիարժեք անձ, մանկավարժական գործընթացի ակտիվ սուբյեկտ, իր ուսումնական գործունեությունը, հնարավորության սահմաններում, ինքնուրույն պլանավորող, կազմակերպող և իրագործող մարդ:

Գիտության զարգացումը մեզ լավ հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչպես է տեղի ունենում սովորելու գործընթացը: Դիտարկենք այն: Երբ արտաքին աշխարհից տեղեկատվություն ենք ստանում, այն սկզբում առնչվում է մեր կարճաժամկետ կամ աշխատանքային հիշողությանը: Որպեսզի կարողանանք արտաքին աշխարհից տեղեկություն ստանալ, մեզ պետք է ուշադրության կենտրոնացում: Ուշադրությունը կարևոր է ոչ միայն ուսուցման համար, այլև այսօր համարվում է մարդու կյանքի կարևորագույն ռեսուրսը: Համենայնդեպս, բիզնես ընկերությունները հասկացել են, որ մարդու վրա ազդելու համար առաջնայինը նրա ուշադրությունը գրավելն է: Եթե կարողանաք մարդու ուշադրությունը գրավել, ապա կարող եք տիրանալ նրա ժամանակին, փողերին ու ազդել նրա վրա: Պատահական չէ, որ Նոբելյան մրցանակի դափնեկիր Հերբերտ Սայմոնը շրջանառության մեջ է դրել «ուշադրության տնտեսություն» արտահայտությունը: Ժամանակակից կրթության մեծագույն խնդիրներից մեկն այն է, որ աշակերտների ուշադրությունը գրավված է տարբեր բիզնես ինդուստրիաների, գործունեության տեսակների կողմից: Եվ այդ մրցակցության մեջ կրթությունը պարտվողի դերում է: Մարդկային ապրելակերպում ընդունված է, որ ի տարբերություն չափահասների՝ երեխաները ոչնչով զբաղված չեն: Հետևաբար՝ նրանք պետք է պարապեն, սովորեն: Այսօր երեխաների կյանքին բիզնես ինդուստրիաների ակտիվ միջամտության արդյունքում աշակերտներն այլևս պարապ չեն: Նրանք զբաղված են ֆուտբոլային հանդիպումներ, սերիալներ դիտելով ու տարատեսակ խաղերով: Աշակերտներին բավականաչափ զբաղեցնում են նաև սոցիալական ցանցերը: Մի խոսքով՝ սովորելու ժամանակ շատ քիչ է մնում: Որպեսզի սովորելու

գործընթացը հնարավոր լինի, կրթության համակարգը պետք է փորձի գրավել աշակերտների ուշադրությունը:

Նոր գիտելիքներ ձեռք բերելու աշակերտի հնարավորությունը մեծապես կախված է այն բանից, թե գիտելիքների նախնական ինչ պաշար ունի աշակերտը: Մեր գիտելիքների պաշարը պահեստավորվում է երկարատև հիշողության մեջ: Այն աշակերտները, ովքեր ունեն գիտելիքների հարուստ պաշար, ավելի շատ բան կարող են վերցնել նոր ուսուցանվող նյութից: Սրանից կարելի է կարևոր եզրահանգում կատարել՝ որքան շատ գիտելիքներ ունեք, այնքան հեշտ ու շատ կարող եք նոր բաներ սովորել:

Պրոբլեմային ուսուցման գաղափարական հիմքերը և մեթոդիկան

Ուսուցման մեթոդը ուսուցչի և աշակերտի հետևողական, փոխկապակցված գործողությունների համակարգն է, որն ապահովում է կրթության բովանդակության յուրացումը:

Ինչ մեթոդներ են այսօր անհրաժեշտ ուսուցչին արդյունավետ ուսուցում կազմակերպելու համար: Մեթոդների ընտրությունը և կիրառությունը ինքնանպատակ լինել չեն կարող: Այն կապված է բազմաթիվ խնդիրների հետ, որոնք իրական լուծում կարող են ստանալ միայն հատուկ պլանավորված և կազմակերպված ուսումնական գործընթացի միջոցով: Ուսուցման գործընթացը իր մեջ ներառում է բազմազան մեթոդներ: Ուսուցման մեթոդները այսօր 2 խումբ են կազմում՝ ավանդական և նոր կամ ժամանակակից:

Ավանդական են համարվում բացատրական գննական այն մեթոդները, որոնց հիմքում ընկած է պատրաստի տեղեկատվության պարզ փոխանցումը սովորողին և վերջինիս կողմից դրա վերարտադրումը:

Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքի ձեռքբերման գործընթացում նրա անմիջական ակտիվ մասնակցությունը: Ուսուցման ընթացքում, ակտիվ միջավայրն ապահովող մեթոդներն ընդունված է անվանել ինտերակտիվ կամ փոխներգործուն մեթոդներ:

Ակտիվ ուսուցումը ենթարկում է այնպիսի մեթոդների համակարգի կիրառում, որը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պարտադիր գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրություն, այլ ուսուցման ակտիվ ճանաչողական պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում:

Պրոբլեմային է կոչվում այն ուսուցումը, որի ընթացքում աշակերտները, ուսուցչի ղեկավարությամբ, իրենց ունեցած գիտելիքների հիման վրա լուծում են պրոբլեմային խնդիրներ, հաղթահարում պրոբլեմային իրավիճակներ, որոնում գործողության նոր եղանակներ, կարգավորում ու կողմնորոշում իրենց գործունեությունը, գործադրում պրոբլեմային շարադրանքի, մասնակի որոնողական կամ հետազոտական մեթոդներ, ինքնուրույնաբար ձևակերպում իրենց եզրակացությունները:

Ուսուցման ճանաչողական գործընթացը ակտիվացնելու համար կիրառվում են ուսուցման ավանդական մեթոդները՝ օգտագործելով այնպիսի հնարներ, ինչպիսիք են պրոբլեմային իրավիճակների ստեղծումը, հարցադրումը՝ ներառելով պրակտիկ վարժություններ խնդիրներ: Իհարկ ակտիվ մեթոդների կիրառումը ուղղված է առաջնային գիտելիքի ձեռքբերմանը, մտածողության զարգացմանը, հետաքրքրությունների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը, սակայն պետք է հաշվի առնել, որ այդ գործընթացը բավականին ժամանակ է պահանջում, այդ պատճառով դրան զուգահեռ կիրառում են նաև ավանդական մեթոդները: Ակտիվ մեթոդը կիրառում են ուսուցման գործընթացի այն հատվածում, երբ անհրաժեշտ է զարգացնել աշակերտների մտածողությունը և ճանաչողական ակտիվությունը, զարգացնում է հաղորդակցական հմտությունները, խնդիրները միասին լուծելու կարողությունները: Ակտիվ ուսուցման մեթոդների կիրառման նպատակն է աշակերտներին ներգրավել ինքնուրույն իմացական գործունեության մեջ, ստեղծել

անձնական շահագրգռվածություն ցանկացած ճանաողական խնդիրներ լուծելու համար, սովորեցնելու կիրառել աշակերտների կողմից ձեռք բերված գիտելիքները: Պրոբլեմային դասի ստեղծման տեխնոլոգիան այնքան էլ հեշտ չէ: Դասի ընթացքում մենք օգտագործում ենք պրոբլեմային հարցեր և հոգեվիճակներ՝ ակտիվացնելու համար սովորողի մտծողությունը:

Պրոբլեմային մտածողության կազմակերպման և սովորողի մտավոր գործունեությունը կառավարելու համար կարևոր նշանակություն ունի հարցերի բնույթը: Ըստ պրոբլեմայնության բնույթի՝ հարցերը բաժանվում են երկու խմբի՝ տեղեկատվական և պրոբլեմային: Հայտնի գիտելիքներ պարունակող հարցերը, որոնք տրվում են պատասխան ստանալու նպատակով, տեղեկատվական են: Հարցը, որին պատասխանելու համար սովորողը փնտրում է պատրաստի պատասխան, պրոբլեմային բնույթ չունի: Հարցը պետք է ունենա տրամաբանական կապ նախկինում յուրացված հասկացությունների և նրանց միջև, որոնք դեռ ենթակա են յուրացման որոշակի ուսումնական իրավիճակում, պարունակի իր մեջ իմացական դժվարություններ, առաջացնի զարմանքի զգացում՝ նորը հնի հետ համադրելիս: Պրոբլեմային հարցը պարունակում է խնդիր, որը դեռևս բացահայտված չէ, անհայտ բնագավառ, նոր գիտելիք, որ ձեռքբերման անհրաժեշտ է ինտելեկտուալ գործողություն, որոշակի նպատակաուղղված մտավոր գործընթաց:

Պրոբլեմային դասի կազմակերպումը ենթադրում է հաջորդական և նպատակաուղղված իմացական խնդիրների առարադրում սովորողներին:

Այդ խնդիրները լուծելով՝ նրանք յուրացնում են նոր գիտելիքներ: Ըստ հաճախ իմացական պրոբլեմներն առաջ են քաշում այնպիսի խնդիրների օգնությամբ, որոնք առավել տիպական են տվյալ ուսումնական առարկայի համար:

Խնդիրները լայն կիրառություն ունեն նաև տեղեկատվական ուսուցման ընթացքում, սակայն խնդիրների օգտագործման դիտակտիկական նպատակները տարբեր են:

Պրոբլեմային ուսուցման ընթացքում խնդիրները առաջին հերթին կիրառում են սովորողներին հասու դարձնելու նոր թեման և ակտիվացնելու իմացական գործընթացը:

Պրոբլեմային մոտեցմամբ խնդիրները նախորդում են տեսական դրույթների հաղորդմանը, իսկ տեղեկատվականի դեպքում՝ հաջորդում:

Եթե սովորողը խնդիրն ընկալում է, որպես պրոբլեմ և ինքնուրույն լուծում է այն, ապա դա հենց նրա մտավոր ընդունակությունների զարգացման գլխավոր պայմանն է:

Պրոբլեմային ուսուցման մեջ նշանակալից տեղ է զբաղեցնում պրոբլեմային խնդրի լուծումը: Պրոբլեմային խնդիրները նույնիսկ թույլ հաշվողական ունակությամբ աշակերտին թույլ են տալիս ոչ միայն զգալի ֆիզիկական երևույթների բարդությունը, այլև նույնիսկ հասկանալ դրանց էությունը, նրանց մղել պրոբլեմի ինքնուրույն լուծմանը դրա իմաստավորմանը և իրեն տեսնել հայտնագործողի դերում, նաև բավարարվածության զգացում ունենալ մտավոր աշխատանքից: Այդպիսի խնդիրները թույլ են տալիս սովորողներին նախկին ուսումնասիրած նյութը համեմատության մեջ դնել իրենց կողմից ստացված արդյունքների հետ, կատարել եզրակացություն:

Ո՞ր խնդիրը կարելի է համարել պրոբլեմային.

Առանձնացնում են պրոբլեմային խնդրի երեք առանձնահատկություն. պրոբլեմային հոգեվիճակի առկայությունը, որոշակի պատրաստվածություն և հետաքրքրություն՝ պրոբլեմի լուծումը փնտրելու ճանապարհին, ոչ միանշանակ լուծման հնարավորություն՝ պայմանավորված փնտրման տարբեր ուղղություններով:

Պրոբլեմային խնդիրներն ու հարցերն ունեն հետևյալ առանձնահատկությունները:

Խնդիրը պետք է հետաքրքրությունն առաջացնի իր անսովորությամբ, անսպասելիությամբ ոչ ստանդարտ լինելով: Այն հատկապես գրավում է սովորողին, եթե պարունակում է հակասություններ, զոնե թվացյալ: Պրոբլեմային առաջադրանքը պետք է առաջացնի զարմանք, ստեղծի հուզական միջավայր:

Պրոբլեմային խնդիրներն անպայման պետք է պարունակեն որոշ չափով իմացական կամ տեխնիկական դժվարություններ:

Թվում է թե լուծումը տեսանելի է, բայց « խանգարում» է դժվարությունը, որն անշուշտ, առաջ է բերում մտավոր ակտիվության ծփանք: Օրինակ՝ գնդածողային կամ ծավալային մոդելների հավաքումը, որոնք արտացոլում են ատոմների իրական դիրքորոշումը տարածության մեջ: Պրոբլեմային խնդիրը ենթադրում է հետազոտական տարրեր, տարբեր եղանակներով դրա կատարման ուղիների փնտրում, դրանց համեմատում: Ուսումնական պրոբլեմի լուծման տրամաբանությունը.

1. Պրոբլեմային հոգեվիճակի վերլուծություն,
2. Պրոբլեմի ներդրում, դժվարության էության գիտակցում,
3. Պրոբլեմի հստակ ձևավորում,
4. Անհայտության սահմանափակում, տեղայնացում,
5. Հնարավոր պայմանների որոշում բարեհաջող լուծման համար,
6. Պրոբլեմի լուծման պլանի կազմում, որը պետք է իր մեջ ներառի լուծման մի քանի տարբերակ,
7. Ենթադրությունների և վարկածի առաջադրում , որը ձևավորում է «տրամաբանորեն առաջ քայլելու» արդյունքում,
8. Վարկածի ապացուցում իրականանաում է հետազոտական ճանապարհով, որոնք ստուգվում են,
9. Պրոբլեմի լուծման ստուգում, նպատակների հակադրում, խնդրի պահանջների, գործնականում ստացված արդյունքի և տեսական եզրակացությունների համապատասխանելիությունը,
10. Լուծման գործընթացի վերլուծություն և կրկնություն: Պրոբլեմային ուսուցման դեպքում գերակշռում է որոնողական գործունեությունը:

Պրոբլեմ նշանակում է հանձնարարություն, խնդիր, տեսական կամ գործնական հարց, որը ձևավորում է սովորողի գիտակցության մեջ և լուծում է պահանջում:

Պրոբլեմային իրավիճակը մանկավարժությունում, ի տարբերություն հոգեբանության, դիտարկվում է ոչ թե որպես ինտելեկտուալ լարված վիճակ, որը կապված է մտքի ընթացքի անսպասելիարգելքի հետ, այլ դիտվում է որպես դժվարության վիճակ, որը ծագել է որոշակի ուսումնական վիճակում, սովորողների կողմից նախկինում սովորած գիտելիքների և նոր ձեռք բերված գիտելիքների միջև առաջացած հակասությունների պատճառով՝ պատասխանելու համար ծագած՝ իմացական հարցին:

Պրոբլեմային հարցը, անսպասելի դժվարություն է, որը ձևավորում է սովորողի գիտակցության մեջ՝ զարմացնելով, մտահոգելով և խթանելով մտավոր վորոնումներ:

Պրոբլեմային հարցը, ինչպես նաև պրոբլեմային խնդիրը համարվում է մտածողության օբյեկտի բնութագիրը:

Պրոբլեմային հարցը տարբերվում է տեղեկատվականից նրանով, որ այն կողմնորոշված է դեպի հակասական իրավիճակները և տանում է անհայտ, նոր գիտելիքների վորոնման:

Պրոբլեմային ուսուցման ամենապատասխանատու և դժվար փուլերից է խնդրահարույց վիճակի ստեղծումը: Այն կառուցված է սովորողների տեսական գիտելիքների և դասի ընթացքում ուսուցչի կողմից հաղորդված գիտելիքների անհամաջայնության վրա:

Օրինակ՝ որոշենք, թե ինչպե՞ս է փոխվում հոսանքի ուժը զուգահեռ միացման ճյուղերում, երբ ճյուղերից մեկում փոքրանում է դիմադրությունը(չճյուղավորված մասը նույնպես պարունակում է դիմադրատարր):

1. Ինչպե՞ս է փոխվում զուգահեռ միացման և ամբողջ շղթայի դիմադրությունը:
2. Ինչպե՞ս է փոխվում հոսանքի ուժը շղթայի չճյուղավորված մասում:
3. Ինչպե՞ս է փոխվում լարումը հաղորդչի վրա շղթայի չճյուղավորված մասում:
4. Ինչպե՞ս է փոխվում լարումը զուգահեռ միացման տեղամասում:
5. Ինչպե՞ս է փոխվում հոսանքի ուժը այն ճյուղում, որի դիմադրությունը չի փոխվել:
6. Ինչպե՞ս է փոխվում հոսանքի ուժը այն ճյուղերում, որոնց դիմադրությունը փոքրացել է:
7. Ստուգում են խնդրի լուծումը:

Պրոբլեմային դասը պետք է կազմակերպվի այնպես, որ ամբողջ դասարանը մասնակցի ծագած հարցերի պատասխանները որոնելուն:

Պրոբլեմային իրավիճակների լուծումը. սովորողներն իրենք են ձեռք բերում լուծման համար անհրաժեշտ գիտելիքները, անցնում են այդ բնագավառի գիտական աշխարհի ճանաչման բոլոր փուլերով, վարկածի առաջքաշումից մինչև դրա ստուգումը, հասնում են հայտնագործության տրամաբանությանը:

Պրոբլեմային դասի մշակման մեխանիզմը կարելի է արատահայտել հետևյալ հաջորդականությամբ. ուսուցիչը պայմաններ է ստեղծում խնդիրը առաջադրելու համար, ղեկավարում է սովորողների գիտակցության մեջ հարցի ձևավորման գործընթացը և տվյալ օրինակով դիտարկում գիտական իմացության հիմունքները: Խնդրի լուծման ընթացքում նա ցույց է տալիս նոր մտքի ծնունդը. ու զարգացումը, իսկ սովորողը ուշադիր հետևում է այդ շարժմանը յուրացնելով իր համար նոր տեղեկատվությունը:

Կարևորը այդ դեպքում արդեն կատարված հայտնագործություններն սովորողներին իմաստավորված և մատչելի ձևով ներկայացնելն է ինչը նրանց հնարավորություն է տալիս վերապրելու այն ոգեվորությունն ու դրամատիզմը, որոնք ուղեկցել են այդ կարևոր հայտնագործությունն

Պրոբլեմային իրավիճակի ստեղծման դասի ընթացքում կարելի է հասնել որակական խնդիրներ առաջարկելու և լուծելու միջոցով: Դրանցից են օրինակ այն հարց-խնդիրները, որոնց լուծման համար գրեթե հաշվարկ չի պահանջվում: Իհարկե ուսումնական նյութը կրկնելու նպատակով առաջադրող հարցերը պահաջում են մակերեսային գիտելիքներ, մինչդեռ որակական խնդիրները լուծելու դեպքում

սովորողները կդրսևորեն հնարամտություն, ցույց կտան ֆիզիկական երևույթները հստակ պատկերացնելու և դրանք ճիշտ կիրառելու իրենց հմտությունները: Հաշվի առնելով դասարանի մտավոր հնարավորությունները ուսուցիչն առաջադրում ու ձևակերպում է պրոբլեմը՝ պահանջներով, որ աշակերտներն ինքնուրույն գտնեն լուծման ուղիները: Այս պայմանների դեպքում լուծմանը մասնակցելու ցանկություն է հայտնում գրեթե ողջ դասարանը: Եթե աշակերտն ընկալում է խնդիրն որպես պրոբլեմ և ինքնուրույն լուծում է այն, ապա դա նրա մտավոր ընդունակությունների զարգացման գլխավոր պայմանն է: Դասարանին կարելի է առաջադրել հետևյալ որակական խնդիրը, երբ ուսումնասիրված է դասարանի կողմից <<Էներգիայի պահպանման օրենքը>> թեման:

Պրոբլեմը տեսնելու ունակությունը ինտեգրալ հատկություն է, որը բնութագրում է մարդու մտածողությունը : Այն զարգանում է երկար ժամանակում, գործունեության տարբեր ոլորտներում, և, այնուամենայնիվ, դրա զարգացման համար կարելի է ընտրել հատուկ վարժություններ ու մեթոդներ, որոնք նշանակալից չափով կօգնեն այդ դժվար մանկավարժական խնդրի լուծմանը:

Պրոբլեմային դասը գիտելիքների և հմտությունների ձեռքբերման, մտքի ակտիվացման և զարգացման գործունեություն է (վերլուծություն, համադրում, համեմատություն) ստեղծագործման սկիզբ, ելք դեպի հետազոտական գործունեություն:

Պրոբլեմային դասը հիմնվում է պրոբլեմային իրավիճակների վրա: Դրա հիմքում կարող են ընկած լինել գիտական տեսության և կյանքի փորձի միջև անհամապատասխանությունը, ունեցած գիտելիքների և նոր փաստերի միջև հակասությունը, կարծիքների բախումը, վարկածի ընտրությունը, իրադարձությունների առկայությունը, տեղեկատվության անբավարարությունը:

Պրոբլեմային ուսուցումը նպաստում է սովորողների իմացական հետաքրքրությունների ձևավորմանն ու որոշակիացմանը: Պրոբլեմային ուսուցումը կարելի է իրականացնել դեղուկտիվ և ինդուկտիվ մեթոդների կիրառմամբ: Առաջին դեպքում սովորողները հնարավորություն են ստանում իմացած գիտելիքներից տեսական տրամաբանական ճանապարհով արտածել նոր գիտելիքներ: Ինդուկտիվ մեթոդի կիրառման պարագայում առավել ընդլայնվում է որոնողական գործունեության ոլորտը, ձևավորում են ստեղծագործական մտածողության տարրեր: Պրոբլեմային ուսուցումը սովորողների մտավոր դաստիարակության լուրջ գործառույթ ունի : Սովորողները կուտակում են ստեղծագործական գուծունեության փորձ, սովորում են ունեցած գիտելիքները ստեղծագործաբար կիրառել երևույթները հասկանալու բացատրելու համար: Բացի այդ, ձևավորում է գիտելիքները միմյանց հաղորդելու կարողություններ, քննադատական մտածողություն, բանավիճելու կուլտուրա: Քայլ առ քայլ երեխաները ջեռք են բերում բնության մասին որոշակի ընդհանրական պատկերացումներ, ինչը գիտական աշխարհայացքի ձևավորման հիմքն է: Պրոբլեմային իրավիճակն առաջանում է ուսումնական նյութի տրամաբանությունից: Ուսումնական բոլոր նյութերը չէ, որ կարող են ծառայել պրոբլեմային ուսուցմանը:

Պրոբլեմային դասի մեթոդաբանությունը քննարկելիս դիտարկում են.

- Խնդրի լուծման մեթոդները. հետազոտական, նախագծային:
- Դասի ընթացքում խնդրիլուծման միջոցները. խոսքային, դասախոսություն, էքսկուրսիա, փորձ, գործնական աշխատանք խմբերում:
- Ուսուցման մեթոդները. խոսքային, դասախոսություն, էքսկուրսիա, փորձ, գործնական աշխատանք խմբերում:
- Վարկածի առաջարկում և դրա գրանցումը գրատախտակին, հետազոտում, տեղեկատվական նյութի փոխանակում խմբերում աշխատելիս, աշխատանքի ներկայացում:
- Տեղեկատվության մշակում (կարևոր տեղեկությունների առանձնացում, ավելի վաղ արված վարկածի հաստատում կամ հերքում):
- Դասի ընդհանրացում, խնդրի լուծման այլ տարբերակների վերանայում, խնդրի լուծման ստուգում:
- Տնային հանձնարարություն:


Պրոբլեմային ուսուցման ժամանակ տեղի է ունենում գիտելիքների, ունակությունների և հմտությունների ձևավորում:

Պրոբլեմային դասին աշակերտները մտածում են վերլուծում, քննարկում և ընդհանրացում:

Վերարտադրության փուլում կազմում են գծանկար: Նման ուսումնական գործունեությանն անվանում են ստեղծագործական:

Իսկական պրոբլեմային դասն սկսվում է պրոբլեմային իրավիճակից, որի հիմքում դրված են տարբեր հակասություններ: Չարմանքն ի հայտ է գալիս, երբ ուսուցիչը նոր փաստեր է հաղորդում, որոնք չեն տեղավորվում սովորողների ուսումնասիրած տեսության, յուրացված օրենքների և հակասությունների շրջանակում՝ հակասելով դրանց:

Պրոբլեմային դասի կառուցվածքային մոդելը



Եզրակացություն

Պրոցեսի սկիզբը պրոբլեմային իրավիճակն է: Մարդն սկսում է մտածել այն ժամանակ, երբ ինչ որ բան հասկանալու կարիք ունի: Մտածողությունը որպես կանոն առաջանում է հարցից կամ պրոբլեմից, զարմանքից կամ հակասությունից: Մտածողության պրոցեսը միշտ ուղղված է ինչ որ խնդրի լուծմանը:

Ս. Լ. Ռուբինշտեյն

Պրոբլեմային ուսուցումը նպաստում է սովորողի տրամաբանական մտածողությանը, զարգացնում է բանավիճելու կարողությունը, օգնում է կատարել ինքնուրույն եզրակացություններ, իր տեսակետը հայտնելու, պաշտպանելու ունակությունը, նպաստում է հետազոտական աշխատանք կատարելուն:

Դասապրոցեսին կիրառվող մեթոդները ստեղծում են ուսումնառության մի միջավայր, որում ապահովված է սովորողների ակտիվ մասնակցությունը ուսումնական գործընթացում, առկա են հետաքրքրության խթանում, ուշադրության կենտրոնացում: Մեթոդների կիրառումը, դասավանդումը դարձնում են հետաքրքիր, սովորողների տեսակետների կարևորումը նպաստում է նրանց կշռադատելու կարողության զարգացմանը:

Պրոբլեմային ուսուցումը մտավոր գործունեություն է, իսկ ստեղծագործական ընդունակություններն իրականացվում են մտավոր գործունեությամբ:

Օգտագործված Գրականություն

1. Բնագետ 2010թ.
«Պրոբլեմային դասի մշակաման և անցկացման մեթոդական բնութագիրը»
2. armedu.am
«Ակտիվ ուսուցման մեթոդները»
3. hib.armedu.am/resource1826
4. Ուսուցման արդյունավետ հնարներ / Ս. Խաչատրյան.- Եր.: Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020.- 74 էջ:
5. armedu.am2017